Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի Վ. Գ. Բելինսկու անվան հ. 38 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի երաժշտության (20 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում ՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով թափուր տեղի անվանումը, որին հավակնում է /Ձև 1/,
2. Փաստաթուղթ /դիպլոմ/ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն /Ձև4/,
5. Թափուր տեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները /դրանց առկայության դեպքում/,
6. Մեկ լուսանկար՝ 3 x 4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են մրցույթի հրապարակման օրվանից մինչև սեպտեմբեմի 23-ը ներառյալ, աշխատանքային օրերին՝ ժամը 09:00-ից 14:00-ը:

Մրցույթը տեղի կունենա 2021թ. սեպտեմբերի 28-ին՝ ժամը 12:00-ին, Երևանի Վ.Գ. Բելինսկու անվան հ.38 հիմնական դպրոցում. հասցեն Երևան Գ. Նժդեհի 22:

Տեղեկությունների համար զանգահարել 010-44-00-66 հեռախոսահամարով: